ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԸ**

Արայիկ Խզմալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Աշխաբադ (Թուրքմենստան)
2019 թվականի նոյեմբերի 4-6-ը

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Թուրքմենստանի մշակույթի նախարարություն

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն «Թուրքմենստանում Հայաստանի մշակույթի օրեր» ծրագրի շրջանակներում կայանալիք միջոցառումներին:

Միջոցառմանը մասնակցեցին Երևանի պետական կամերային երգչախումբը, Շողակն համույթը, Տերյան մշակույթի կենտրոնը, ՀՀ ազգային պատկերասրահը: Տերյան մշակույթի կենտրոնը ներկայացրել է հայկական ձեռագործական արվեստի հմտությունները: ՀՀ ազգային պատկերասրահի տնօրենի մասնակցությամբ բացվել է ցուցահանդես ազգային պատկերասրահի հավաքածուների արտատպված ցուցանմուշներով:

Այցի շրջանակում հանդիպել եմ Թուրքմենստանի մշակույթի նախարարի տեղակալի հետ, հարցազրույցներ եմ տվել տեղի լրատվամիջոցներին, ելույթով հանդես եմ եկել հայկական մշակույթի օրերի բացման արարողությանը: Պատվիրակությունը Թուրքմենստանում Հայաստանի դեսպանությանն է տրամադրել գրականություն՝ հայ համայնքին փոխանցելու նպատակով:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Շահագրգիռ կողմերի հետ քննարկել եմ մշակույթի ոլորտում համագործակցության հեռանկարները՝ մասնավորաբար պայմանավորվածություն եմ ձեռք բերել առ այն, որ թուրքմենական մասնագետները 2020 թվականին կմասնակցեն Հայաստանում կազմակերպվող «Հիշողության կերպարանքները» միջազգային սեմինարին, ինչպես նաև հայ թատերական գործիչները կմասնակցեն Աշխաբադում կազմակերպվող ամենամյա թատերական փառատոնին:

11.11.2019

Արայիկ Խզմալյան